

**5.12. Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության 2004թ. դեկտեմբեր ամսվա մոնիթորինգ**

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետության բնական շրջակա միջավայրը 2004թ. դեկտեմբեր ամսին ունեցել է հետևյալ բնութագիրը.

**Օդային ավազանի որակի մոնիթորինգ:** Դեկտեմբերին օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի և Արարատ քաղաքներում:

Նշված քաղաքների 12 դիտակայանների միջոցով վերցվել է օդի 2503 փորձանմուշ: Որոշվել են մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի կոնցենտրացիաները:

- Երևան քաղաքում դեկտեմբերին վերցվել է օդի 1176 փորձանմուշ: Որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ազոտի օքսիդի, քլորոպրենի և արոմատիկ ածխաջրածինների կոնցենտրացիաները: Փոշու միջին ամսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՍԹԿ) գերազանցվել է 2.7, ծծմբի երկօքսիդինը՝ 2.6, ազոտի երկօքսիդինը՝ 2.8, բենզոլինը՝ 2.3 անգամ: Ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ն գերազանցվել է 2.9 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.3, ազոտի երկօքսիդինը, բենզոլինը և տոլուոլինը նվազել են համապատասխանաբար 1.3, 1.7 և 1.5 անգամ:

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Երևանի մթնոլորտում**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ <sup>3</sup>	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.4
Ծծմբի երկօքսիդ	0.26	0.13
Ազոտի երկօքսիդ	0.25	0.11
Ազոտի օքսիդ	0.12	0.05
Բենզոլ	0.571	0.232
Տոլուոլ	0.513	0.164
Քսիլոլ	-	-
Էթիլ բենզոլ	-	-
Քլորոպրեն	-	-

- Գյումրի քաղաքում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 26 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 4.0 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան բարձրացել է 1.2 անգամ:
- Վանաձոր քաղաքում վերցված օդի 759 փորձանմուշում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները: Փոշու և ծծմբի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ները գերազանցվել են 2.0-ական, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդինը՝ 1.3-ական անգամ: Ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար 1.6 և 1.2 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.3 անգամ, իսկ ազոտի երկօքսիդինը բարձրացել է նույնքան անգամ:

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Վանաձորի մթնոլորտում**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ <sup>3</sup>	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.3
Ծծմբի երկօքսիդ	0.19	0.10
Ածխածնի օքսիդ	8.0	4.0
Ազոտի երկօքսիդ	0.10	0.05

- *Հրազդան քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:*
- *Ալավերդի քաղաքում օդի 494 փորձանմուշում որոշվել են փոշու, ծծմբի երկօքսիդի, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները: Փոշու և ազոտի երկօքսիդի միջին ամսական ՍԹԿ-ները գերազանցվել են 1.3-ական, ծծմբի երկօքսիդինը՝ 12.2 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միանվագ առավելագույն ՍԹԿ-ները գերազանցվել են համապատասխանաբար 2.0 և 1.4 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան նվազել է 1.2 անգամ:*

**Հսկվող աղտոտիչների առավելագույն և միջին ամսական կոնցենտրացիաները ք.Ալավերդու մթնոլորտում**

Աղտոտիչ նյութերի անվանումը	Կոնցենտրացիաները, մգ/մ <sup>3</sup>	
	առավելագույն	միջին ամսական
Փոշի	-	0.2
Ծծմբի երկօքսիդ	0.99	0.61
Ածխածնի օքսիդ	5.0	2.0
Ազոտի երկօքսիդ	0.12	0.05

- *Արարատ քաղաքում ցեմենտի փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 24 փորձանմուշ: Փոշու միջին ամսական ՍԹԿ-ն գերազանցվել է 2.0 անգամ: Նոյեմբեր ամսվա համեմատ փոշու միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխություն չի դիտվել:*

**Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգ:** Դեկտեմբերին մակերևութային ջրերի նմուշառ կատարվել է Փամբակ, Դեբեդ, Չորագետ, Մարցիգետ, Ախթալա, Հրազդան, Մարմարիկ, Գետառ գետերից և Երևանյան լճից:

Վերցված փորձանմուշներից 8-ում որոշվել է 24 ցուցանիշ, 9-ում՝ 30 ցուցանիշ (վերցված 17 փորձանմուշում որոշվել է 462 ցուցանիշ):

Դեբեդ գետի ավազանից վերցված փորձանմուշներում գերազանցվել են միայն ամոնիում և նիտրիտ իոնների ՍԹԿ-ները:

Փամբակ գետում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.9–2.3 անգամ, Դեբեդ գետում՝ 2.1–5.2 անգամ: Ամոնիում իոնի ՍԹԿ-ն Փամբակ գետում գերազանցվել է 1.1–3.9, իսկ Դեբեդ գետում 1.5 անգամ:

Ախթալա գետի գետաբերանի մոտ ընկած հատվածքում դիտվել է կախված մասնիկների բարձր կոնցենտրացիա՝ 234.7 մգ/մ<sup>3</sup>:

Հրազդան գետից վերցված փորձանմուշներում դիտվել են բարձր աղտոտվածության դեպքեր: Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում դիտվել է ամոնիում իոնով բարձր

## 5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

աղտոտվածություն (ՍԹԿ գերազանցում 10-ից մինչև 100 անգամ)՝ ՍԹԿ-ն գերազանցվել է 40.8 անգամ, Քաղսի գյուղի մոտ ընկած հատվածքում՝ պղինձ իոնով բարձր աղտոտվածություն (ՍԹԿ գերազանցում 30-ից մինչև 100 անգամ)՝ ՍԹԿ-ն գերազանցվել է 31.0 անգամ:

Վերցված մյուս փորձանմուշներում դիտվել են ամոնիում, նիտրիտ, պղինձ, ցինկ իոնների և նավթամթերքի ՍԹԿ-ների գերազանցման դեպքեր:

Հրազդան գետի վերին հոսանքներում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 1.4–3.8 անգամ, իսկ Երևան քաղաքից ներքև և գետաբերանի մոտ ընկած հատվածքներում՝ 5.2–8.0 անգամ: Գետաբերանի մոտ ընկած հատվածքում ամոնիում իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 9.6 անգամ: Դարբնիկ գյուղի մոտ ընկած հատվածքում պղինձ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 28.0 անգամ:

Գետառի գետաբերանի մոտ ընկած հատվածքում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 6.8, ամոնիում իոնինը՝ 2.7, ցինկ իոնինը՝ 12.2 անգամ:

Երևանյան լճում նիտրիտ իոնի ՍԹԿ-ն գերազանցվել է 3.0, ցինկ իոնինը՝ 4.5 անգամ:

Վերցված բոլոր փորձանմուշներում նավթամթերքի ՍԹԿ-ն գերազանցվել է 3.2–6.4 անգամ:

Հսկվող մյուս աղտոտիչների կոնցենտրացիաները եղել են նորմաների սահմաններում: